ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Ե Ր Ե Վ Ա Ն - 2022

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի կողմից 2021 թվականին կատարված հիմնական աշխատանքների վերաբերյալ

2021 թվականի ընթացքում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) աշխատանքային գործունեության հիմքում դրված էին ՀՀ ջրային օրենսգրքի, ջրի ազգային ծրագրի և ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների, ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի մասին ՀՀ օրենքները, ինչպես նաև ՀՀ կառավարության ջրային ոլորտի բարեփոխումների մասով ընդունված որոշումները, ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումները, որոնցով հաստատված են համակարգի հիմնական ծրագրային դրույթները և ուղղությունները:

2021 թվականին Կոմիտեի կողմից ապահովվել է ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին>> N 650-Լ որոշման 1 հավելվածի 137-149-րդ կետերի պահանջները, ինչպես նաև ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին>> N 1902-Լ որոշման 1 հավելվածի տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն բաժնի 77-88-րդ կետերի պահանջները:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են աշխատանքները՝ ջրամատակարարման տևողության ավելացման, ջրի որակի բարելավման, ինստիտուցիոնալ բարեփոխումների խորացման, վարձակալության պայմանագրի վերահսկման, մատակարարված ոռոգման ջրի դիմաց վճարների հավաքագրման մակարդակի բարձրացման, համակարգի ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացման, բյուջետային, վարկային և դրամաշնորհային միջոցների արդյունավետ օգտագործման, ինչպես նաև այլ ուղղություններով: Տարվա ընթացքում մամուլում տեղ են գտել ոլորտին վերաբերող բազմաթիվ հրապարակումներ, իրականացվել են հանրային քննարկումներ և մամուլի ասուլիսներ:

Ջրային տնտեսության ոլորտում ջրային կոմիտեի համակարգմամբ 2021 թվականի ընթացքում կատարվել են հետևյալ հիմնական աշխատանքները.

1.Համաձայն 2016 թվականի նոյեմբերի 21-ին ՀՀ կառավարության՝ ի դեմս ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական Կոմիտեի, <<Վեոլիա Օ Ժեներալ դեզ Օ>> կոմանդիտային բաժնետիրական ընկերության և <<Վեոլիա Ջուր>> փակ բաժնետիրական ընկերության միջև ստորագրված վարձակալության պայմանագրի, որն ուժի մեջ է մտել 2017 թվականի հունվարի 1-ից, 2021 թվականին <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի կողմից որպես վարձակալական վճար ՀՀ պետական բյուջե մուտքագրվել է 731.0 մլն դրամ:

Համաձայն Վարձակալության պայմանագրի, Վարձակալի՝ <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի կողմից ներկայացվել է պայմանագրային 4-րդ տարվա (2020թ.) պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագրի (ՊԿԱԾ) իրականացման հաշվետվությունը: ՊԿԱԾ-ի շրջանակներում վերակառուցվել և վերանորոգվել են ջրագծեր, կոյուղագծեր, օրվա կարգավորիչ ջրամբարներ և կապտաժներ, տեղադրվել են առևտրային հաշվառքի սարքեր՝ ընդհանուր մոտ 2,05 մլրդ դրամ գումարի շրջանակներում:

ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի, հունիսի 10-ի և օգոստոսի 6-ի <<Որպես նվիրատվություն գույք ընդունելու, Հայաստանի Հանրապետության

տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեին ամրացնելու և <<Վեոլիա Ջուր>> փակ բաժնետիրական ընկերությանը վարձակալության հանձնելու մասին>> N 549-Ա, N 942-Ա ևN 1295-Ա որոշումներով 67,5 մլն դրամ արժեքով ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարսեր համայնքի, <<Նորշին>>, <<Մագաս>>, «ՋՍՖ» և «Գրանդ Քենդի» ՍՊԸ-ների գույքերը, որպես նվիրատվություն ընդունվել են Հայաստանի Հանրապետության կողմից: Նշված գույքերը Ջրային կոմիտեին ամրացնելուց հետո՝ <<Վեոլիա Ջուր>> փակ բաժնետիրական ընկերության հետ կնքվել են N 22 և 23 համաձայնագրերը՝ Վարձակալության պայմանագրի շրջանակներում գույքերը <<Վեոլիա Ջուր>> փակ բաժնետիրական ընկերությանը վարձակալության հանձնելու նպատակով:

Վարձակալի կողմից մատուցվող ծառայությունների բարելավման, նոր ջրընդունիչ համակարգ կառուցելու նպատակով ՀՀ կառավարության 30.09.2021թ. N 1598-Ա որոշմամբ ձեռք է բերվել համապատասխան հողատարածք և իրականացվել է նոր ջրային համակարգ ստեղծելու համար անհրաժեշտ գործողություններ:

Համաձայն Վարձակալության պայմանագրի, ինչպես նաև <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի թիվ ԼՋN0001 լիցենզիայի դրույթների, խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների սակագնային սցենարով 2022 թվականի և հետագա 2-3 տարիների համար նախատեսվում էր սակագների որոշակի բարձրացում, որը թույլ չտալու, ինչպես նաև մինչև վարձակալության պայմանագրի ավարտը սակագները հնարավորինս կայուն և անփոփոխ պահելու նպատակով ստեղծվեց Ջրային կոմիտեի, ՀԾԿՀ-ի և <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի ներկայացուցիչներից կազմված աշխատանքային խումբ, որի գործունեության արդյունքում 2021 թվականի նոյեմբերի 10-ին ստորագրվեց Վարձակալության պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Համաձայնագիր N24-ը: Արդյունքում մնացած 10 պայմանագրային տարիների համար խմելու ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների սակագների արժեքը կլինի 200 դրամ/մ^3 (ներառյալ ԱԱՀ-ն) սահմաններում:

Կոմիտեն ՀՀ ՀԾԿՀ-ի և ՀԿ-ների մասնակցությամբ 2021 թվականի սեպտեմբեր-հոկտեմբերի ժամանակահատվածում իրականացրել է ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների սակագների հաշվարկներում ներառվող մանրածախ ջրամատակարարման փաստացի ծավալների ճշգրտմանն ուղղված մոնիթորինգ: Հայտնաբերված շուրջ 433 խախտման դեպքերի առնչությամբ արձանագրվել է մոտ 2,14 մլն խոր.մ ծավալային արժեքով լրացուցիչ սպառում: Համաձայն ՀՀ ՀԾԿՀ-ի 2020 թվականի նոյեմբերի 27-ի N422-Ն որոշման՝ 2021 թվականի մոնիթորինգի արդյունքում ձևավորված լրացուցիչ մանրածախ սպառման ջրաքանակի հետ կապված 1.75 դրամ/խոր.մ (ներառյալ ԱԱՀ-ն) սակագնի նվազեցումը նույնպես հաշվի է առնվել 2022 թվականի սակագնի ճշգրտման հաշվարկներում:

Համապատասխան աշխատանքներ են իրականացվել Վարձակալության պայմանագրով նախատեսված Անկախ տեխնիկական աուդիտորի կողմից <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի 2020 թվականի գործունեության աուդիտի ապահովման համար:

Իրականացվել են ներդրումների պլանավորման և ակտիվների կառավարման գործողությունների ծրագրի մշակման աշխատանքներ: Ուսումնասիրվել և վերլուծվել են Վարձակալի կողմից Ջրային կոմիտե ներկայացված ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվությունները, համապատասխան մասնագիտական առաջարկություններ են ներկայացվել Անկախ տեխնիկական աուդիտորին և Վարձակալին: Ապահովվել է մասնակցություն ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հիմնանորոգման ու վերակառուցման աշխատանքների մրցութային գործընթացին:

Ուսումնասիրվել են ՀՀ պետական ներդրումային ծրագրերով ջրամատակարարման համակարգերում նախատեսվող աշխատանքները և ներկայացվել են առաջարկություններ:

ՀՀ համայնքներում 70 խմելու և 43 ոռոգման ջրմատակարարման ոլորտներում իրականացվող սուբվենցիաների ծրագրային հայտերի վերաբերյալ Ջրային կոմիտեն ուսումնասիրել և իր դիրքորոշումն է ներկայացրել շահագրգիռ մարմիններին:

2. Ոռոգման նպատակով ջրառ իրականացնող <<Ջրառ>> փակ բաժնետիրական ընկերության, ինչպես նաև ոռոգման ջուր մատակարարող 15 ջրօգտագործողների ընկերությունների գործունեությունների արդյունքներով ապահովվել է 87,3 հազ. հա հողատարածքների կայուն ջրամատակարարումը՝ նախորդ տարվա՝ 85,4 հազ. հա համեմատ 1,9 հազ. հեկտարով ավելի:

Դեռևս 2016 թվականից մեկնարկել է ոռոգման համակարգերում SCADA համակարգով հագեցած ջրաչափական սարքավորումների տեղադրման և շահագործման միջոցառումների գործընթացը: Վերը նշված սարքավորումների ձեռքբերումն և տեղադրման աշխատանքների իրականացումը համաձայն նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում է 2,6 մլրդ. դրամ: 2021 թվականին ՀՀ պետական բյուջեով հատկացված 787.0 մլն դրամ միջոցներով կնքվել են ոռոգման համակարգերը 689 հատ SCADA համակարգով հագեցած ջրաչափական սարքավորումներով կահավորելու աշխատանքների իրականացման պայմանագրերը: Մրցույթի արդյունքում տնտեսվել է շուրջ 191.9 մլն դրամ գումար: Պայմանավորված ջրօգտագործողների ընկերությունների կողմից արված առաջարկությունների (պայմանագրի գնի չբարձրանալու պայմանով) <<Շենիկ>>, <<Արագածոտն>>, <<Թալին>>, <<Շիրակ>>, <<Լոռի>>, <<Տավուշ>>, <<Գեղարքունիք>> և <<Եղեգնաձոր>> ՋՕԸ-երի սպասարկման տարածքներում ոռոգման համակարգերում ջրառի կետերը, ներտնտեսային ցանցի բաժանարար հանգույցները կահավորվել են 715 հատ SCADA համակարգերով հագեցած ջրաչափական սարքերով, որը ավել է պայմանագրով նախատեսվածից 27 հատով:

ՀՀ կառավարության 2021 թվականի մարտի 4-ի N 287-Ն որոշմամբ՝

- ✓ 15,6 մլն դրամ է հատկացվել Արաքս գետի 11/1 և 11/3 սահմանային Հ-39 նշանի հատվածում ափապաշտպան կառույցների վերականգնման աշխատանքների համար: Աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել են
- ✓ 108,6 մլն դրամ է հատկացվել Երևան քաղաքի Եղվարդի խճուղու միջնամասից մինչև Հալաբյան փողոցի վերջնամասը 1954 մետր երկարությամբ և 522 մմ տրամագծով ոռոգման ջրագծի կառուցման աշխատանքների համար: Աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել են:
- ✓ 21,5 մլն դրամ է հատկացվել ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի կոյուղատարի կոլեկտորի Վարսեր-Գեղամավան վթարային հատվածի ժամանակավոր վերակառուցման աշխատանքների իրականացման համար: Աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել են:
- ✓ 89,4 մլն դրամ է հատկացվել ՀՀ Կոտայքի մարզի Գեղարդալճի ինքնահոս համակարգի չավարտված աշխատանքների իրականացման համար, սակայն նախագծային փաստաթղթերով նախատեսված մետաղական խողովակների ներկրումը պայմանավորված պատերազմական իրավիճակով և ներկրման սահմանափակումների հետևանքով չի իրականացվել: ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N2165-Ն որոշմամբ թույլատրվել է Ջրային կոմիտեին աշխատանքներն իրականացնել մինչև 2022 թվականի սեպտեմբերի 30-ը:

ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի N 536-Ն որոշմամբ՝

- ✓ 105,0 մլն դրամ է հատկացվել ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքում ջրամատակարարման և ջրահեռացման ցանցի վերակառուցման համար: Իրականացվել է 96 մլն դրամի աշխատանքներ: Աշխատանքներն չեն ավարտվել:
- ✓ 32,1 մլն դրամ է հատկացվել ՀՀ Արարատի մարզի Նոր Կյանք համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցման համար: Աշխատանքները գտնվում են ավարտական փուլում:
- ✓ 140,8 մլն դրամ է հատկացվել ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցման համար: Համաձայն կնքված պայմանագրի տրվել է 69,0 մլն դրամ կանխավճար: Անհրաժեշտություն է առաջացել նախագծային փաստաթղթերում կատարել էական փոփոխություններ: Շինարարական աշխատանքները կիրականացվեն Նախագծի փոփոխություններից հետո:

ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 6-ի N 737-Ն որոշմամբ 107,2 մլն դրամ է հատկացվել Արփա-Սևան ջրատարի փականային և ջրաչափական հանգույցների վերազինման և արդիականացման համար: Կնքվել է 99,3 մլն դրամի Պայմանագիր, առաջացած տարբերությունը, որպես տնտեսում վերադարձվել է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ: Աշխատանքների իրականացման համար վճարվել է 19,4 մլն դրամ կանխավճար: Աշխատանքներն ընթացքի մեջ են:

ՀՀ կառավարության 2021 թվականի հուլիսի 15-ի N 1156-Ն որոշմամբ՝

- ✓ 60,7 մլն դրամ է հատկացվել ՀՀ Արարատի մարզում Արաքս գետի 5/2, 5/3 և 5/4 սահմանային նշանների հատվածում ափապաշտպան արգելաթմբի կատարի բարձրացման աշխատանքների համար: Աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել են:
- ✓ 28,9 մլն դրամ է հատկացվել ՀՀ Արմավիրի մարզում Արաքս գետի 17/2 սահմանային նշանի մոտ ափի ամրացման աշխատանքների համար: Աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել են:
- ✓ 52,1 մլն դրամ է հատկացվել ՀՀ Տավուշի մարզի Դեբետավան գյուղի տարածքում Դեբետ գետի շուրջ 1500 մետր արգելաթմբի վերականգնման աշխատանքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման համար: Աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել են:

ՀՀ կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 28-ի N 1780-Ն որոշմամբ հատկացվել է 14,2 մլն դրամ ՀՀ Գեղարքունիքի մարզի Արգիճիի և Աստղաձորի ջրամբարների կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման համար: Կազմակերպված մրցութային գործընթացի արդյունքում Ջրային կոմիտեի և «Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ-ի միջև 2021 թվականի հոկտեմբերի 27-ին կնքվել է ՀՀ Գեղարքունիքի մարզի Արգիճիի և Աստղաձորի ջրամբարների կառուցման համար նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման ՋԿ-ԳՀԾՁԲ-21/2-Ն գնման պայմանագիրը: ՀՀ կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 28-ի N 1780-Ն որոշմամբ հատկացվել են ֆինանսական միջոցներ ծառայությունների ձեռքբերման համար: ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N2165-Ն որոշմամբ թույլատրվել է Ջրային կոմիտեին լուծել պայմանագիրը և ֆինանսական միջոցներն ուղղել ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ, հաշվի առնելով կողմերի համաձայնագրի ձևակերպման հարցում տարաձայնությունները, որը կբերեր կողմերի նկատմամբ վստահության և գործարար համբավի վնասմանը:

Ընդունվել է <<Մինչև 3 հա հողատարածքներում կաթիլային, անձրևացման ոռոգման համակարգերի ներդրման դեպքում ջրօգտագործողներին ոռոգման ջրի

վարձավճարի փոխհատուցման ծրագիրը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 14.10.21թ. N1695-Լ որոշումը, որի համաձայն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական մշակաբույսերով զբաղեցված այն հողատարածքները, որոնք ընդգրկված են ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքներում՝ բացառությամբ ջերմատների և ջերմոցային տնտեսությունների, այն ֆիզիկական և իրավաբանական անձինք, ովքեր հանդիսանում են ջրօգտագործողների ընկերությունների անդամներ, ովքեր մինչև 3 հա հողատարածքներում կաթիլային, անձրևացման ոռոգման արդի համակարգերում կկատարեն ներդրում, կստանան ոռոգման ջրի վարձավճարի փոխհատուցում՝ 5 տարի ժամկետով:

Ընդունվել է ՀՀ կառավարության 2021 թվականի հուլիսի 22-ի <<Հայաստանի Հանրապետության ցամաքուրդային (դրենաժային) համակարգերից օգտվելու կարգը, վճարները և պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մասին>> N1201-Ն որոշումը, որի համաձայն ցամաքուրդային համակարգերից օգտվող սուբյեկտների արդարացի մասնակցությունը կապահովի համակարգերի շահագործման ու պահպանման աշխատանքներին՝ նվազեցնելով պետության բեռը՝ ձևավորելով լրացուցիչ միջոցներ, որոնք կուղղվեն մաքրման աշխատանքների ծավալների մեծացմանը, հնարավորություն կընձեռնվի նախաձեռնել ցամաքուրդային համակարգերի շահագործման և նորոգման աշխատանքներ: Կկանոնակարգվեն համակարգերի սեփականատիրոջ, շահագործող կազմակերպության և դրանից օգտվող սուբյեկտների իրավահարաբերությունները, կհաշվառվեն այդ սուբյեկտները և համակարգերից օգտվելը կիրականացվի պայմանագրային հիմունքներով:

3. ***Համակարգի կազմակերպությունների հիմնական գործունեության վերլուծությունը ցույց է տալիս,*** որ 2021 թվականին իրագործվել են հաստատված ծրագրերը:

Ոռոգման և խմելու ջրամատակարարման ծառայությունների դիմաց հավաքագրումների գծով 2021 թվականին համակարգի գանձումը կազմել է շուրջ 27.1 մլրդ դրամ՝ 2020 թվականի 25.1 մլրդ դրամի փոխարեն կամ ավել է գանձվել 2.0 մլրդ դրամ:

Խմելու ջրի ոլորտում գանձման տոկոսը 2021 թվականին կազմել է 93,5%, որը նախորդ տարվա դրությամբ ավել է 0,8 %-ով, իսկ ոռոգման ոլորտում գանձման տոկոսը 2021 թվականին կազմել է 68.9 %, որը նախորդ տարվա դրությամբ ավել է 8.0 %-ով:

Խմելու ջրի մասով գանձվել է շուրջ 22.79 մլրդ դրամ՝ 2020 թվականի 21,41 մլրդ դրամի դիմաց կամ ավել է գանձվել շուրջ 1,38 մլրդ դրամ, իսկ ոռոգման ոլորտում գանձվել է 4,28 մլրդ դրամ՝ 2020 թվականի 3,74 մլրդ դրամի դիմաց կամ ավել է գանձվել շուրջ 540.0 մլն դրամ:

Հաշվի առնելով 2021 թվականի սակավաջրության և եղանակային անբարենպաստ պայմանները՝ համակարգն ունեցել է էլեկտրաէներգիայի գերածախս: 2021 թվականին էլեկտրաէներգիայի ծախսը կազմել է 232,2 մլն կՎտ ժ կամ 9,27 մլրդ դրամ՝ 2020 թվականի 200,16 մլն կՎտ/ժամի դիմաց՝ 7,4 մլրդ դրամ կամ ավել է ծախսվել 32,04 մլն կՎտ ժ՝ 1,9 մլրդ դրամ: Ոռոգման ոլորտում էլեկտրաէներգիայի ծախսը կազմել է 170,19 մլն կՎտ ժ կամ 7,1 մլրդ դրամ՝ 2020 թվականի 142,8 մլն կՎտ ժ՝ 5,6 մլրդ դրամի դիմաց կամ ավել է ծախսվել 27,4 մլն կՎտ ժ կամ 1.6 մլրդ. դրամ: Էլեկտրաէներգիայի գերծախսի 1.9 մլրդ դրամը պայմանավորված է նաև էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

<<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ հաշվետվության համաձայն ապահովվել է ջրի որակի համապատասխանությունը գործող ստանդարտներին և ջրի որակի համապատասխանությունը սանիտարական նորմերի (մանրէաբանական վերլուծություն

անցած ջրի որակի պահանջներին համապատասխանող նմուշների տոկոսը) պահանջների կազմել է 98.4 %:

4. 2021 թվականի ընթացքում <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի սպասարկման տարածքում ջրամատակարարման միջին կշռային տևողությունը՝ Երևան քաղաքում եղել է 23,2 ժամ/օր, այլ քաղաքային համայնքներում 20,6 ժամ/օր, իսկ գյուղական տարածքներում 20,1 ժամ/օր:

5. Շարունակվել է բարելավվել հաշվառման համակարգը խմելու ջուր մատակարարող կազմակերպության սպասարկման տարածքում ջրաչափությունը կազմում է 99.7%:

6. 2021 թվականի մայիսի 24-ին ընդունվել է <<Ոռոգման նպատակով 2021 թվականին Սևանա լճից ջրառի մասին>> ՀՀ կառավարության N 842-Ա որոշումը, որով ոռոգման նպատակով Սևանա լճից 2021 թվականի ջրառի չափաքանակը սահմանվել է մինչև 170,0 մլն խոր.մ:

Սևան-Հրազդան դերիվացիոն համակարգից սնվող ոռոգման համակարգերի իշխման տակ ընկած հողերի ոռոգման ջրապահովության դեֆիցիտը մասնակի մեղմելու/ջրապահովվածությունը բարձրացնելու անհրաժեշտությամբ 2021 թվականի օգոստոսի 17-ին ընդունվել է <<Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին>> օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՕ-322-Ն օրենքը, որի համաձայն 2021 թվականին Սևանա լճից ոռոգման նպատակով ջրի բացթողնման տարեկան առավելագույն չափաքանակը ավելացվել է 75 մլն խոր.մ-ով և սահմանվել է մինչև 245 մլն խոր.մ:

2021 թվականի մայիսի 25-ից մինչև հոկտեմբերի 27-ը Սևանա լճից ոռոգման նպատակով բաց է թողնվել 227,65 մլն խոր.մ ջուր, (նախորդ տարվա ոռոգման շրջանում բաց է թողնվել 162,39 մլն խոր.մ ջուր), իսկ Արփա-Սևան թունելով 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Սևանա լիճ է տեղափոխվել շուրջ 157,5 մլն խոր.մ ջուր, 2020 թվականին՝ 205,2 մլն խոր.մ դիմաց կամ պակաս է տեղափոխվել շուրջ 47,7 մլն խոր.մ ջուր, որը կախված է եղել Արփա և Եղեգիս գետերի պակաս ջրատվությամբ:

7.<<Որոտան-Արփա-Սևան» հիդրոհանգույցի ջրային համակարգը 2004 թվականի օգոստոսի 17-ին կնքված N ԾՁԲ-04/36 պայմանագրի համաձայն հանձնվել է հավատարմագրային կառավարման <<Արփա-Սևան>> ԲԲԸ-ին:

<<Որոտան-Արփա-Սևան թունելի ջրային համակարգի կառավարում>> ծրագրի <<Արփա-Սևան թունելի հավատարմագրային կառավարում>> միջոցառմամբ 2021 թվականին հատկացվել է 205.8 մլն դրամ:

8. Ջրամբարաշինության և ենթակառուցվածքների արդիականացման ծրագրերի շրջանակներում իրականացվել են համապատասխան աշխատանքներ, այդ թվում.

8.1 Վեդու ջրամբարը կառուցվում է ՀՀ Արարատի մարզում՝ Վեդի գետի աջափնյա Կոտուց սելավատարի վրա, ջրամբարը լցնելու համար ջրաղբյուր են հանդիսանում Վեդի և Խոսրով գետերը:

2017 թվականի մարտ ամսին տրվել է Վեդու ջրամբարի պատվարի շինարարական աշխատանքների մեկնարկը:

Վեդու ջրամբարի պատվարի և օժանդակ կառուցվածքների կառուցման շրջանակներում իրականացվել և ամբողջությամբ ավարտվել են պատվարի հիմնատակի, վարարային ջրհեռի և ոռոգման կուլվերտի փորման և հողային աշխատանքները: Ավարտված են նաև հիմնատակի բետոնային սալի տեղադրումն ու ցեմենտացումը: Իրականցվել են նաև վարարային ջրհեռի (L=390մ.) բետոնային աշխատանքների 93.0 %-

ը և ոռոգման կուլվերտի (L=490մ.) բետոնային աշխատանքների 86,9 %-ը: Կառուցված է հիմնական պատվարի 55 մետր (ընդհանուր 87մ) բարձրությամբ հատվածը:

Ավարտվել են ջրի փոխադրող համակարգի (ընդհանուր 11 կմ) և Վեդի ու Խոսրով գետերի վրա երկու ջրառ հանգույցների շինարարական աշխատանքները, ինչպես նաև իրականացվել են շահագործման (5մ³/վ) և ճնշումային փորձարկումները: Համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 14-ի N 1689-Ա որոշման մեկնարկել է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեին գույք ամրացնելու, անհատույց օգտագործման իրավունքով գույք հանձնելու և նվիրաբերելու, ինչպես նաև «Ջրառ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը ավելացնելու համար հանձնման-ընդունման հանձնաժողովի կազմման գործընթացը:

Ոռոգման համակարգի (L=36.2կմ) շինարարական աշխատանքներն ամբողջությամբ ավարտված են՝ ներառյալ փորձարկումները:

Վեդու ջրամբարի և Վեդի գետի իշխման տակ գտնվող շուրջ 4000 հա հողատարածքների ներտնտեսային ոռոգման ցանցի մանրամասն նախագծանախահաշվային փաստաթղթերն ամբողջությամբ մշակված են:

Վեդու ջրամբարի և Վեդի գետի իշխման տակ գտնվող մոտ 1200-1300 հա փորձնական հողատարածքներում ոռոգման ներտնտեսային ցանցի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակումը նախատեսվում է ավարտել 2022 թվականի երկրորդ եռամսյակում, իսկ շինարարական աշխատանքները՝ 2023 թվականի հուլիսին:

8.2 Կապսի կիսակառույց ջրամբարը գտնվում է ՀՀ Շիրակի մարզում՝ Գյումրի քաղաքից դեպի հյուսիս 22 կմ հեռավորության վրա գտնվող Ախուրյանի գետահովտում:

ՋՌՀԿ/Ախուրյան գետ Փուլ 1>> մշակվել են ինքնահոս համակարգի կառուցման մանրամասն նախագծման և տեխնիկական վերահսկողության մրցութային փաստաթղթերն ու առաջադրանքի պայմանները, որոնք ներկայացվելու են KFW բանկի հաստատմանը, սակայն գործընթացը դեռևս չի մեկնարկել, քանի որ ծրագիրն ակտիվ չէ և վարկային միջոցները դեռ հասանելի չեն:

«ՋՌՀԿ/Ախուրյան գետ, Փուլ 1» (BMZ No. 2014 67 950) ծրագրի նախագծանախահաշվային փաստաթղթերի և «Կապսի ջրամբարի և օժանդակ կառուցվածքների կառուցում» մրցութային փաթեթի կազմման աշխատանքները ավարտվել են և մեկնարկել է մրցութային գործընթացը: Մրցույթի առաջարկների ներկայացման հրավերներն 2021թ.-ի նոյեմբերի 1-ին ուղարկվել են նախաորակավորում անցած 2 կազմակերպություններին:

ՀՀ կառավարության 2020 թվականի օգոստոսի 27-ի 1411-Լ որոշմամբ հաստատված Հողերի ձեռքբերման և վերաբնակեցման գործողությունների պլանի (այսուհետ՝ ՀՁՎԳՊ) համաձայն Ջրաձոր բնակավայրը պետք է վերաբնակեցվի նոր բնակավայրում: ՀՁՎԳՊ իրականացման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված ընկերության՝ «Գլոբալ Փարթներս Գրուպ» ՍՊԸ հետ կնքվել է պայմանագիր, և տրվել է ծառայությունների մատուցման Առաջադրանքի պայմանների կատարման մեկնարկը: Պայմանագրով աշխատանքների ավարտը նախատեսվում է 2027 թվականի հունիսին:

Միևնույն ժամանակ, 2021 թվականի սեպտեմբերի 25-ին հայտարարված ՋՏՄ ԽԲՄ ԾՁԲ-2021/6 ծածկագրով «ՀՁՎԳՊ նախատեսված ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ջրաձորի նոր բնակավայրի կառուցապատման համար անհրաժեշտ ծրագրային և

նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման» խորհրդատվական ծառայությունների մատուցման մրցույթի արդյունքում «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի և «Հայնախագիծ» ԲԲԸ համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) ընտվել է որպես հաղթող մասնակից: 2021 թվականի դեկտեմբերի 8-ից ընտրված մասնակցի համար սկսվել է պայմանագրի շնորհման փուլը: Պայմանագրի ստորագրումից հետո կմեկնարկվի նաև վերոնշյալ կետով նախատեսված աշխատանքների իրականացման գործընթացը՝ 18 ամիս ժամկետով:

9. Կոլեկտորադրենաժային ցանցի մաքրում և ընթացիկ նորոգում, կոլեկտորադրենաժային ցանցի պահպանում և շահագործում, գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման նպատակով իրականացվել են՝

1) 218 կմ ընդհանուր երկարությամբ կոլեկտորադրենաժային ցանցի մաքրման, վերականգնման և նորոգման աշխատանքներ:

2) Արարատյան դաշտում տեղադրված 450 դիտողական հորատանցքներում գրունտային ջրերի մշտական դիտարկումներ: